ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳԵՂԱՄԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

# ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ
# (20-ՐԴ ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍ – 2010-ԱԿԱՆ ԹԹ.)

Է.00.02 «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

**ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2021

**Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում**

**Գիտական ղեկավար՝** **պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Կարապետյան**

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝** **պ.գ.դ., պրոֆեսոր Դ. Կ. Բաբայան**
**պ.գ.թ. Ա. Ա. Հարությունյան**

**Առաջատար կազմակերպություն՝**

**Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարան**

Պաշտպանությունը կայանալու է 2021 թ. հունիսի 3-ին, ժ. 14.00-ին ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում, (հասցե՝ 0019, ք.Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2021 թ. ապրիլի 22- ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝ պ.գ.թ., դոցենտ Գ. Ա. Մարգարյան

## ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:** Հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է միջազգային հարաբերությունների համակարգում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դիրքի ամրապնդմամբ, 21-րդ դարում նրա տնտեսության հզորացմամբ և 20-րդ դարի վերջից Չինաստանի հյուսիս-արևմտյան հատվածում անջատողականության, կրոնական ծայրահեղականության և ահաբեկչական դրսևորումների մակարդակի բարձրացմամբ: Վերոնշյալ հանգամանքները հիմք են հանդիսանում մի շարք պետությունների կողմից «ույղուրական հարցի» շահարկման, Չինաստանի վրա միջազգային ճնշումներ գործադրելու համար և կանխելու՝ ՉԺՀ տնտեսական և քաղաքական հեռանկարային էքսպանսիան:

20-րդ դարի վերջից ույղուրական անջատողական տրամադրությունների վերելքի արդյունքում Կենտրոնական Ասիայում տարածում գտած պանթյուրքական գաղափարախոսության և կրոնական ծայրահեղականության գործոններն ուղղակիորեն ազդում էին Չինաստանի թե ներքին, և թե արտաքին քաղաքականության վրա: Ելնելով ՀՀ-ՉԺՀ հարաբերությունների ռազմավարական նշանակությունից՝ կարևոր է նախ ուսումնասիրել ույղուրական գործոնի ազդեցությունը ՉԺՀ արտաքին քաղաքականության վրա, հանգել եզրակացությունների, ապա շարունակել զարգացնել երկկողմանի հարաբերությունները՝ հաշվի առնելով ույղուրական գործոնի առկայությունը: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև «ույղուրական հարցում» Թուրքիայի Հանրապետության ուղղակի ներգրավվածությամբ, իսկ միջազգային ասպարեզում խնդրի շահարկման տեսանկյունից՝ ԱՄՆ և արևմտյան այլ երկրների հետաքրքրությամբ:

Հնարավոր չէ անտեսել նաև ժամանակակից փուլում Սինձյան-Ույղուրական ինքնավար մարզում Չինաստանի զսպողական, կանխարգելիչ քաղաքականության փաստը, որն արժանանում է միջազգային հանրության կոշտ արձագանքին: Այդ իսկ պատճառով, անհրաժեշտ է նախևառաջ ուսումնասիրել «ույղուրական հարցի» բուն էությունը, պատմական նախադրյալները, 20-րդ դարի վերջից Սինձյանում տեղի ունեցող փոփոխությունները և դրանց ազդեցությունը ՉԺՀ արտաքին քաղաքականության վրա:

**Ուսումնասիրության օբյեկտն ու առարկան:** Հետազոտության օբյեկտը Չինաստանի արտաքին քաղաքականության ույղուրական բաղադրիչներն են: Ուսումնասիրության առարկա է դարձել Չինաստանի Ժողովրդական Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականությունը, կայացման պատմական փուլերը, տարածաշրջանային փոփոխություններն ու դրանց կապը Սինձյանում տեղի ունեցած զարգացումների հետ: Աշխատանքում ուսումնասիրվել են նաև թուրք-չինական և հայ-չինական հեռանկարային հարաբերությունները՝ ելնելով Չինաստանի արտաքին քաղաքականության վրա ազդեցություն թողած ույղուրական գործոնի տեսանկյունից:

**Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը:** Հետազոտության իրականացման ընթացքում կիրառվել են ինչպես պատմահամեմատական, համադրական, այնպես էլ փաստերի բովանդակային վերլուծության մեթոդները:

**Հետազոտության նպատակն ու խնդիրները:** Աշխատանքի նպատակն է ուսումնասիրել ՉԺՀ արտաքին քաղաքականության ոլորտում ույղուրական բաղադրիչները և ներկայացնել դրանց ուղղակի ազդեցությունը ՉԺՀ արտաքին քաղաքականության փոխակերպական գործընթացների վրա: Ելնելով վերոնշյալից, ձևակերպվել են հետևյալ խնդիրները՝

- ներկայացել ույղուրական էթնոսի պատմական ուղին և ցույց տալ հան-ույղուրական միջէթնիկ հարաբերությունների ընդհանրական պատկերը
- ներկայացնել ՉԺՀ ներքին և արտաքին քաղաքականության փոխակերպումները
- վեր հանել 20-րդ դարի վերջին տեղի ունեցած տարածաշրջանային փոփոխությունները և ցույց տալ դրանց կապն ույղուրական անջատողականության, ծայրահեղականության և ահաբեկչության մակարդակի բարձրացման հետ
- ներկայացնել Սինձյանում 1990-ական թվականներին ՉԺՀ իշխանությունների կողմից նախաձեռնած փոփոխություններն ու դրանց անդրադարձն «ույղուրական հարցի» վրա
- ուսումնասիրել և վերլուծել ույղուրական ահաբեկչական կազմակերպությունների ձևավորման հիմքերը, գործունեությունը և վերջինիս ուղղակի ներգործությունը ՉԺՀ թե ներքին, և թե արտաքին քաղաքականության վրա
- դիտարկել և վերլուծել «ույղուրական հարցը» ՄԱԿ, ԵՄ, ՇՀԿ շրջանակներում
- դիտարկել և գնահատել ույղուրական գործոնի դերը Հայաստանի և Թուրքիայի՝ Չինաստանի հետ հարաբերությունների զարգացման կոնտեքստում

**Ժամանակագրական սահմանները**: Ներկայացվող աշխատանքի ժամանակագրական հիմնական սահմանները ներառում են 20-րդ դարի կեսից մինչև 21-դարի երկրորդ տասնամյակ ընկած ժամանակահատվածը: Այնուամենայնիվ, ելնելով թեմայի արդիականությունից, ինչպես նաև հետազոտության շրջանակներում առաջադրված նպատակներին հասնելու և խնդիրները պատշաճ ձևով ներկայացնելու անհրաժեշտությունից, աշխատանքում տեղ են գտել նաև ույղուրական էթնոսի պատմական ուղուն վերաբերող փաստեր, իսկ ույղուրական անջատողականության նախադրյալների և պետական կազմավորումների ի հայտ գալու տեսանկյունից՝ անդրադարձ է կատարվել նաև Սինհայի հեղափոխությունից մինչև Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հռչակման միջև ընկած ժամանակահատվածին:

**Հետազոտության գիտական նորույթը:** Ներկայացվող աշխատանքն ինքնին եզակի է, քանի որ թեման հայ պատմագրության մեջ չի ենթարկվել հետազոտության և դեռևս չկան բավարար ուսումնասիրություններ: Ավելին, առաջին անգամ փորձ է արվել դիտարկել «ույղուրական հարցը» ՉԺՀ արտաքին քաղաքականության համատեքստում, այդպիսով նպաստելով չինագիտության զարգացմանը Հայաստանում և ույղուրական խնդրի համապարփակ

ուսումնասիրությանը: Թեև ՀՀ-ում չինագիտությունը համեմատաբար նոր ճյուղ է համարվում՝ պայմանավորված Հայաստանի ԽՍՀՄ կազմի մեջ լինելու հանգամանքով, սակայն արդեն իսկ ուսումնասիրվել են հայ-չինական հարաբերությունների որոշ փուլեր, ՉԺՀ արտաքին քաղաքականությանը վերաբերող առանձին բաղադրիչներ, իսկ տվյալ աշխատանքը որոշակի գիտական ներդրում է հայկական պատմագիտության մեջ Չինաստանի և հատկապես «ույղուրական հարցի» ուսումնասիրության ոլորտում:

Հետազոտության շրջանակներում գիտական հանրությանն է ներկայացվում ոչ միայն ՉԺՀ ներքին և արտաքին քաղաքականության փոխակերպման փուլերի վերլուծությունը, ույղուրական անջատողականության նախադրյալներն ու պատճառահետևանքային կապերը, «ույղուրական հարցի» միջազգայնացման գործընթացի պատմությունը, այլև՝ ույղուրական գործոնի տեսանկյունից, հայ-թուրքական խնդրահարույց հարաբերությունների դիտարկումը որպես ՀՀ-ՉԺՀ հարաբերությունների զարգացման հնարավոր գործիք:

**Աշխատանքի կիրառական նշանակությունը:** Ներկայացվող աշխատանքի հիմնական բովանդակությունը, դրույթներն ու եզրահանգումները կիրառական նշանակություն ունեն ոչ միայն գիտական հանրության, այլև պետական մարմինների հեռանկարային քաղաքականության մշակման համար: Աշխատանքում առկա նյութերը կարող են օգտագործվել որպես միջազգայնագետ ուսանողներին կամ ԱԳՆ երիտասարդ աշխատակիցներին «Սինձյանի հակամարտության» և միջազգային հարաբերություններում «ույղուրական հիմնախնդրի» հետ ծանոթացնելու ուղեցույց: Բացի այն, որ հետազոտությունն ինքնին ավելացնում է ՀՀ-ում Չինաստանի ուսումնասիրվածության չափը, այն կարող է օգտակար լինել ՀՀ արտաքին քաղաքականությամբ զբաղվող մարմինների համար, կրել խորհրդատվական բնույթ և հիմք հանդիսանալ հայ-չինական հարաբերությունների հետագա զարգացման համար: Դրան զուգահեռ, աշխատանքը կարող է օգտագործվել թյուրքագիտության, չինագիտության, Արևելյան Ասիայի և միջազգային հարաբերությունների ոլորտներին առնչվող նոր ակադեմիական ուսումնասիրությունների համար, ինչն էլ կհանգեցնի նշված ոլորտների տեսական և կիրառական զարգացմանը:

**Աշխատանքի փորձաքննությունը:** Ատենախոսությունը քննարկվել և դրական եզրակացությամբ հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ընդհանուր պատմության բաժնի կողմից: Ատենախոսության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի՝ թվով 6 գիտական հոդվածներում:

**Օգտագործված աղբյուրների և գրականության համառոտ տեսություն:** Գիտական ասպարեզում ներկայացվող հետազոտության թեման դեռևս բավարար կերպով ուսումնասիրված չէ թե հայ, և թե արտասահմանյան մասնագետների կողմից: Չնայած դրան, անհրաժեշտ է փաստել, որ աշխատության առանձին բաղադրիչներ և ոլորտային հատվածներ արժանացել են պատմագետների ուշադրությանը և ենթարկվել մանրամասն ուսումնասիրության: Այսպես, աշխատությունում տեղ գտած ույղուրական էթնոսի ծագման և պատմական ուղու առանձնահատկությունների, տեսակետների համադրման և մշակման

տեսանկյունից կարևոր դեր են խաղացել Կ.Լ Սիրոեժկինի[1], Լ.Ն. Գումիլյովի[2], Իհոնգ Պանի[3], Ս.Ա Վասյուտինի և Պ.Կ Դաշկովսկու[4], Պ.Բ Կոնովալովի[5], Ն. Թուրսունի[6], Ու.Տ Հովալիգի[7], Ջունգ Հո Բայեի և Քուի[8], Ռ. Ռախմանալիևի[9], Մ. Դիլլոնի[10], Վ.Յ. Բաշկուևի[11], Բ. Սուչեկի և Ս. Սուչեկի[12], Վ.Վ Տիշինի[13], Ռ. Թհումի[14], Ա. Չահրյարի[15], Շ. Հաոյի[16] աշխատությունները: Նախքան պաշտոնական փաստաթղթերին, օրենսդրական ակտերին անդրադառնալը, տեղին է նշել, որ Սինձյանում ույղուրական անջատողականության, Պեկինի արձագանքման քաղաքականության, ՉԺՀ արտաքին քաղաքականության և «ույղուրական հարցի» հանրայնացման տեսանկյունից, հետազոտության ընթացքում արժեքավոր դեր են խաղացել Մ. Քլարկի[17], Մ.Դ Ֆրեիտասի[18], Ռ. Ալլիսոնի և Լ. Ջոնսոնի[19], Յ.Յ.Հ Իմմանուելի[20], Չ. և

[1] **Сыроежкин К.Л.,** Мифы и реальность этнического сепаратизма в Китае и безопасность Центральной Азии, Дайк-Пресс, Алматы, 2003.

[2] **Гумилев Л.Н.,** История народа хунну, АСТ: Астрель, М., 2010.

[3] **Yihong P.**, Son of Heaven and Heavenly Qaghan: Sui-Tang China and Its Neighbors, Center for East Asian Studies, Western Washington University, 1997.

[4] **Васютин С.А., Дашковский П.К.,** Социально-политическая организация кочевников Центральной Азии поздней древности и раннего Средневековья (отечественная историография и современные исследования): монография, Изд-во Алт. унта, Барнаул, 2009.

[5] **Коновалов П. Б.,** Этнические аспекты истории Центральной Азии (древность и средневековье), Изд-во БНЦ СО РАН, Улан-Удэ, 1999.

[6] **Турсун Н.,** Китайская историография XX века Средневековой истории уйгуров, Автореферат диссертации на соискание учёной степени кандидата исторических наук, М., 1995. **Турсун Н.,** Вопросы этногенеза уйгуров в китайской историографии, М., 1997.

[7] **Ховалыг У.Т.,** «Токуз-огузская» проблема в истории изучения древних уйгуров Центральной Азии, Вестник НГУ, Серия: История, филология N 5, Том 8, Новосибирск, 2009.

[8] **Jung-Ho Bae, J.H. Ku, Korea Institute for National Unification (South Korea),** China's Internal and External Relations and Lessons for Korea and Asia, 길잡이미디어, 2013.

[9] **Рахманалиев Р**., Империя тюрков. Великая цивилизация, Рипол Классик, М., 2009.

[10] **Dillon M.,** Encyclopedia of Chinese History, Taylor & Francis, London, 2016. **Dillon M.,** Xinjiang: China's Muslim Far Northwest (Durham East Asia Series), Routledge, London, 2003.

[11] **Башкуев В. Ю.,** Роль Синьцзяна во внешней политике России и СССР в Центрально-азиатском регионе (вторая половина XIX – первая половина XX в.), Вестник БНЦ СО РАН, No: 1 (33), Улан-Удэ, 2019.

[12] **Soucek B., Soucek S.,** A History of Inner Asia, Cambridge University Press, 2000.

[13] **Тишин В. В.,** Историография социальной истории Тюркского каганата VI-VIII вв., Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук, М., 2015.

[14] **Ryan Thum,** The Sacred Routes of Uyghur History, Harvard University Press, Cambridgde and London, 2014.

[15] **Chahryar Adle,** History of Civilizations of Central Asia: Towards the contemporary period: from the mid-nineteenth to the end of the twentieth century, UNESCO, 2005.

[16] **Shiyuan Hao,** China's Solution to Its Ethno-national Issues, Springer Nature, 2019.

[17] **Clarke M.,** Terrorism and Counter-Terrorism in China: Domestic and Foreign Policy Dimensions, Oxford University Press, New York, 2018. **Clarke E. M.**, **Misra A**., Pakistan's Stability Paradox: Domestic, Regional and International Dimensions, Routledge, London and New York, 2013. **Clarke M.,** The Impact of Ethnic Minorities on China's Foreign Policy: The Case of Xinjiang and the Uyghur, China Report no. 53/1, 2017.

[18] **Marcus De Freitas,** Reform and Opening-up: Chinese Lessons to the World, Policy Center for the New South, May 2019.

[19] **Allison R., Jonson L.,** Central Asian Security: The New International Context, Brookings Institution Press, Washington D.C., 2004.

Ծ. Չեների[21], Յ. Սուի[22], Դ.Կ. Բաբայանի[23], Ա. Հարությունյանի[24], Կ. Ուարիկուի[25], Յ. Վեի և Ս. Լյուի[26], Ա. Հ. Լյուի և Կ. Փեթերսի[27], Մ. Դիլլոնի[28], Գ. Չենգճենի և Հ. Ծիշանի,[29] Մ. Սահակյանի[30], Ս. Ծանգի[31], Յ. Շիքորի[32], Ջ.Թ. Ռիդի և Դ. Ռաաշկեյի[33] և այլոց աշխատությունները:

Հետազոտությունն իրականացվել է հայերեն, չինարեն, ռուսերեն և անգլերեն տարաբնույթ գրականության, միջազգային փաստաթղթերի, միջազգային կազմակերպությունների զեկույցների, հաշվետվությունների, ՉԺՀ, ԱՄՆ, ԵՄ և Կենտրոնական Ասիայի երկրների օրենսդրական բազայի, ինչպես նաև մի շարք միջազգային դերակատարների դիվանագիտական մարմինների պաշտոնական արձագանքների հիման վրա:

Առանձնահատուկ տեղ են զբաղեցնում հետազոտության ընթացքում հեղինակի կողմից կատարված երկու գործուղումները Չինաստան, որոնց արդյունքում ուսումնասիրվել են ՉԺՀ արտաքին քաղաքականության բաղադրիչները, Սինձյանում տեղի ունեցող զարգացումները, կատարվել մասնագիտական, սոցիոլոգիական և փաստերի համադրմանն ուղղված

---

[20] **Immanuel C. Y. Hsu,** China Without Mao: The Search for a New Order, Oxford University Press, New York and Oxford, 1990.

[21] **Chieh Chen, Jie Chen,** Ideology in U.S. Foreign Policy: Case Studies in U.S. China Policy, Greenwood Publishing Group, Westport and London, 1992.

[22] **Yang Su,** Collective Killings in Rural China during the Cultural Revolution, Cambridge University Press, 2011.

[23] **Бабаян Д.К.,** Политика Китая в Центральной Азии, на Кавказе и в Северном Прикаспии в конце XX- начале XXI вв., Диссертация на соискание ученой степени доктора исторических наук, М., 2016.

[24] **Հարությունյան Ա.,** Չին-թուրքական հարաբերությունների ռազմավարական, քաղաքական, և տնտեսական համագործակցության առանձնահատկությունները, «Ժամանակակից Եվրասիա», h.IV (1), ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2015:

[25] **Warikoo K.,** Religion and Security in South and Central Asia, Routledge, London and New York, 2010. **Warikoo K.,** Xinjiang-China's Northwest Frontier, Routledge, London and New York, 2016.

[26] **Yingqi Wei, Xiaming Liu,** Foreign Direct Investment in China: Determinants and Impact, Edward Elgar Publishing, Cheltenham and Northampton, 2001.

[27] **Amy H. Liu, Kevin Peters,** The Hanification of Xinjiang, China: The Economic Effects of the Great Leap West, Studies in Ethnicity and Nationalism, Volume1=7, Issue2, 2017.

[28] **Dillon M.,** Encyclopedia of Chinese History, Taylor & Francis, London, 2016. **Dillon M.,** Xinjiang: China's Muslim Far Northwest (Durham East Asia Series), Routledge, London, 2003.

[29] **Guo Chengzhen, Han Jishan,** 加强和推进清真寺规范化管理 (Strengthen and promote standardized management of mosques), 2014.12.18. URL: https://web.archive.org/web/20150222163343/http://dzb.rmzxb.com/detail.aspx?id=352820 (16.02.2020)

[30] **Սահակյան Մ.,** Չինաստանի «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունը և Հայաստանը, «Նորավանք» ԳԿՀ, Երևան, 2018:

[31] **Xiaowei Zang,** Handbook on Ethnic Minorities in China, Edward Elgar Publishing, Cheltenham and Northampton, 2016.

[32] **Shichor Y.,** Fact and Fiction: A Chinese Documentary on Eastern Turkestan Terrorism, Central Asia-Caucasus Institute & Silk Road Studies Program, The China and Eurasia Forum Quarterly, Volume 4, No.2, 2006. **Shichor Y.,** Changing the Guard at the World Uyghur Congress, China Brief Volume Online: 6 Issue: 25, 2006. URL: https://jamestown.org/program/changing-the-guard-at-the-world-uyghur-congress-2/ (20.11.2019) **Shichor Y.,** Nuisance Value: Uyghur activism in Germany and Beijing–Berlin relations, Journal of Contemporary China, Vol. 22, Issue 82, 2013.

[33] **Reed J. T., Raschke D.,** The ETIM: China's Islamic Militants and the Global Terrorist Threat, ABC-CLIO, Santa Barbara, Denver and Oxford, 2010.

ուսումնասիրություններ և նյութերի հավաքագրում: Բացի այդ, հետազոտության համար նշանակալի դեր են խաղացել ՀՀ ԱԳՆ համապատասխան բաժինների, ՀՀ ԳԱԱ Պատմության և Արևելագիտության ինստիտուտների գիտաշխատողների հետ խորհրդատվական բնույթ կրող քննարկումները, ինչպես նաև մի շարք վերլուծական կենտրոնների և լրատվական գործակալությունների կայքերում, գիտական ամսագրերում, վիճակագրությամբ զբաղվող մարմինների առցանց կայքերում տեղ գտած նյութերը: Ուսումնասիրվել են նաև միջազգային կազմակերպությունների հաշվետվություններ[34], ՉԺՀ օրենսդրական բազայի որաշակի բաղադրիչներ, որոնցից առանձնահատուկ պետք է նշել ՉԺՀ Սահմանադրությունը[35] և բազմոլորտ ուղղվածություն կրող «Սպիտակ գրքերը»[36]:

Վերոնշյալ հիմնական աղբյուրների, հեղինակների կատարած աշխատանքի, հրապարակումների, պաշտոնական էլեկտրոնային ռեսուրսների, իրավական դրույթների և բուն աշխատանքում տեղ գտած այլ սկզբնաղբյուրների և նյութերի ամբողջությունը թույլ է տալիս հանգել տրամաբանական, պատշաճ եզրահանգումների և ամբողջացնել ներկայացվող աշխատանքի բուն էությունը:

**Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը**: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից:

**Ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, սահմանված են հիմնական նպատակները, խնդիրները, ուսումնասիրության մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, ժամանակագրական սահմանները և տեսակիրառական նշանակությունը:

Հետազոտության առաջին գլուխն ունի «**ՈՒՅՂՈՒՐՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ, ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՂԻՆ ԵՎ ՍԻՆՁՅԱՆ-ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ**» վերնագիրը և բաղկացած է երկու ենթագլխից: Ելնելով ուսումնասիրության շրջանակներում առաջ քաշված նպատակներից և խնդիրներից՝ առաջին գլխում փորձ է արվում ներկայացնել ույղուրական էթնոսի ծագման ակունքները, պատմական փուլերն ու ցույց տալ հան-ույղուրական միջէթնիկ

---

[34] **Human Rights Watch,** Devastating Blows. Religious repression of Uighur in XinJiang, Human Rights Watch short reports/ Asia, Vol. No. 2, April 2005. **Human Right Watch,** “Eradicating Ideological Viruses” China’s Campaign of Repression Against Xinjiang’s Muslims, Human Right Watch, 2018.09.02. URL: https://www.hrw.org/report/2018/09/09/eradicating-ideological-viruses/chinas-campaign-repression-against-xinjiangs (08.03.2020) **Международная Амнистия**, Китайская Народная Республика: Уйгуры спасаются от преследования, в то время как Китай объявляет войну терроризму, МА: ASA, 17/021/2004.

[35] **Конституция КНР (в редакции 2018 г.**), 中国法律俄文网 - Официальный Вебсайт Chinalaw.center, URL: https://chinalaw.center/constitutional_law/china_constitution_revised_2018_russian/ (24.03.2020)

[36] **Full text in English: The Fight Against Terrorism and Extremism and Human Rights Protection in Xinjiang,** White Paper on The State Council Information Office of the People’s Republic of China, 18.03.2019, Unit 3. URL: http://english.www.gov.cn/archive/white_paper/2019/03/18/content_281476567813306.htm (20.03.2020) **Full Text of White Paper on History and Development of Xinjiang,** PRC The Information Office of the State Council, 26.05.2003. URL: http://en.people.cn/200305/26/eng20030526_117240.shtml (20.03.2020) **История и развитие Синьцзяна (Белая книга),** Ministry of Foreign Affairs, the People's Republic of China, 2003.05.31. URL: https://www.fmprc.gov.cn/rus/ziliao/zt/zfbps/t25324.shtml (20.03.2020)

հարաբերությունների էվոլուցիոն պատկերը: Այն անվիճելի նշանակություն ունի բուն «ույղուրական հարցի» պատճառահետևանքային կապի համատեքստում: Առաջին գլխի առաջին ենթագլխում, որը կրում է **«Ույղուրական էթնոսի ծագումը և տարածումը (հին ժամանակներից մինչև 19-րդ դարի վերջ)»** վերնագիրը, անդրադարձ է կատարվում բուն ույղուրական էթնոսի ձևավորմանը, Սինձյան տարածաշրջանում ույղուրների դերակատարությանը և մինչև 19-դարի վերջ ընկած ժամանակահատվածում սեփական պետական միավորներ հիմնադրելու իրողությանը: Քանզի ույղուրական անջատողականության հիմքում ընկած է անկախ պետականություն ունենալու գաղափարը, հետազոտության առաջին գլխի երկրորդ ենթագլխում, որը կրում է **«Ույղուրական պետական կազմավորումները 20-րդ դարում և Սինձյանի միացումը Չինաստանին»** վերնագիրը, ներկայացվել են Չինաստանում 20-րդ դարի սկզբից տեղի ունեցած ներքին փոփոխություններն ու դրանց անմիջական ազդեցությունը Սինձյանի վրա: Առանձնահատուկ ուշադրության է արժանացել 20-րդ դարում ույղուրական երկու անկախ պետական միավորների հիմնադրման նախադեպը, դիտարկվել դրանց աշխարհաքաղաքական նշանակությունը, իսկ վերջնական փուլում ներկայացվել Սինձյանի «երեք տարածքների» միացման իրողությունը նորաստեղծ ՉԺՀ-ին և 1955 թվականի Սինձյան-Ույղուրական ինքնավար մարզի ստեղծման փաստը:

Ատենախոսության երկրորդ գլխում, որը կրում է **««ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ՀԱՐՑԻ» ԾԱԳՈՒՄՆ ՈՒ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՉԺՀ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ»** վերնագիրը, մանրամասնորեն ուսումնասիրության է ենթարկվել «ույղուրական հարցի» ձևավորման փուլերը, դրանում առկա պատճառահետևանքային կապերը, ակտիվացման շրջանները, տարածաշրջանային փոփոխություններն ու դիտարկվել Չինաստանի 20-րդ դարի վերջից սկիզբ առնող անվտանգային մարտահրավերները որպես «ույղուրական հարցի» բաղկացուցիչ մաս: Ատենախոսության երկրորդ գլուխը կազմված է չորս ենթագլուխներից:

Հետազոտության տրամաբանական շղթան պահպանելու և համապարփակ մոտեցում ցուցաբերելու տեսանկյունից, ատենախոսության երկրորդ գլխի առաջին ենթագլխում՝ **«Չինաստանի ներքին և արտաքին քաղաքականության փոխակերպումները»,** ժամանակագրական, պատմագիտական և քաղաքագիտական գործիքների միջոցով փորձ է արվում ցույց տալ 20-րդ դարի երկրորդ կեսին Չինաստանի ներքին և արտաքին քաղաքականության փոխախերպական պատկերը, դրանում առկա մարտահրավերներն ու անձագանքման երևույթները: Բացի այդ, ենթագլխում տեղ են գտել ՉԺՀ կառավարության՝ «չինական առանձնահատկություններով սոցիալիզմի» մոդելին անցում կատարելու պատմական փուլին վերաբերող դրվագներ, որոնք պիռելի դեր են խաղացել չինական պետականության կայացման, հզորացման և տնտեսության զարգացման տեսանկյունից:

Երկրորդ գլխի երկրորդ ենթագլուխն իր **«ՍՈՒԻՄ-ում անջատողական տրամադրությունների աճի նախադրյալները, ներքին և արտաքին պատճառները»** խորագրով հանրությանն է ներկայացնում Սինձյան-Ույղուրական ինքնավար մարզում (ՍՈՒԻՄ) անջատողական գաղափարների տարածման և

ծայրահեղական դրսևորումների աճի նախադրյալները: Ենթագլխում ներկայացվում է նաև 20-րդ դարի վերջին տարածաշրջանային փոփոխությունների՝ ի դեմս ԽՍՀՄ փլուզման և նոր ակտորների ի հայտ գալու փաստի ազդեցությունը ՍՈՒԻՄ-ի ներքին իրավիճակի և «ույղուրական հարցի»՝ ակտիվ փուլ թևակոխման վրա: Տարածաշրջանային փոփոխություններից բացի հանգամանորեն վերլուծվել է Չինաստանի ներքին խնդիրների և «ույղուրական հարցի» միջև կապը, ինչպես նաև լուսաբանվել ՍՈՒԻՄ-ում ՉԺՀ ներքին հատուկ քաղաքականության մշակման և իրականացման իրողությունը:

Երրորդ ենթագլխում, որը կրում է **«Ահաբեկչությունը որպես անջատողականության, կրոնական ծայրահեղականության դրսևորումների հետևանք և ՉԺՀ անվտանգության մարտահրավեր»** վերնագիրը, վեր են հանվում ույղուրական ահաբեկչական դրսևորումների նախադրյալները, դրանց նպատակները և ներկայացվում ՉԺՀ իշխանությունների կողմից կիրառվող համապատասխան արձագանքման գործիքների վերլուծությունը: Անհրաժեշտ է փաստել, որ 21-րդ դարում ահաբեկչության դեմ պայքարը դարձավ միջազգային ակտորների առաջնահերթ խնդիրներից մեկը, ուստի հետազոտության այդ փուլում նպատակահարմար ենք գտել մեծ ուշադրություն դարձնել ույղուրական ահաբեկչական միավորումներին: Այդ իսկ պատճառով ատենախոսության երկրորդ գլխի չորրորդ ենթագլխում, որը կրում է **«Ույղուրական ահաբեկչական կազմակերպությունները (20-րդ դարի վերջ - 21-րդ դարի սկիզբ)»** խորագիրը, անհատականորեն վերլուծվել են ույղուրական ամենաակտիվ դերակատարություն ունեցող ահաբեկչական կազմակերպությունների ստեղծման պատմական փուլերը, դրանց թիրախավորման գործընթացները, սկզբունքային տարբերություններն ու բուն գործունեությունը: Հատկանշական է, որ տվյալ ենթագլխում քննության առարկա դարձած չորս կազմակերպությունների հետազոտումը պայմանավորված է ՉԺՀ արտաքին քաղաքականության վրա մեծ հետք թողնելու հանգամանքով և «ույղուրական հարցի» հանրայնացմամբ: Վերջինս շարունակում է միջազգային հարաբերություններում շահարկման թեմա մնալ մինչ օրս:

Ատենախոսության վերջին երրորդ գլխում՝ **«ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԿՈՂՄ ՁԵՎԱՉԱՓՈՒՄ»,** ուսումնասիրվում են «ույղուրական հարցի» հանրայնացման, միջազգայնացման ասպեկտները, ինչպես նաև «Սինծյանի մարտահրավերի» չեզոքացմանն ուղղված ՉԺՀ կառավարության վարած արտաքին քաղաքականության բաղադրիչները: Երրորդ գլուխը կազմված է երեք ենթագլուխներից: Առաջին ենթագլխում՝ **«ՉԺՀ հակաահաբեկչական քաղաքականության ինստիտուցիոնալացումը՝ «ույղուրական հարցի» միջազգայնացման տեսանկյունից 21-րդ դարի սկզբին»**, անդրադարձ է կատարվում «երեք չարիքների» դեմ ուղղված պայքարին, Չինաստանի այն գործիքակազմին, որի միջոցով Պեկինը փորձում է կանխարգելել անջատողական, կրոնական ծայրահեղականության և ահաբեկչական դրսևորումներով նոր խմբավորումների ի հայտ գալը թե Սինծյանում, և թե տարածաշրջանում: Ձեռք բերելով ներքին հակաահաբեկչական «իմունիտետ», ամրապնդելով իր դիրքերը ՍՈՒԻՄ-ում և կուտակելով «երեք չարիքների» գործոնի դեմ պայքարի բավարար

փորձ՝ Չինաստանը 21-րդ դարում ընդունեց «ույղուրական հարցի» աճանցյալ մարտահրավերներից մեկը: Այն էր՝ «ույղուրական հարցի» միջազգայնացման ռիսկը և որպես դրանից բխող հետևանք՝ տարածաշրջանային միասնական անվտանգային համակարգի ստեղծումը: Այդ իսկ պատճառով, հետազոտության երրորդ գլխի երկրորդ ենթագլխում՝ **««Ույղուրական հարցի» միջազգայնացումը՝ ՄԱԿ, ԵՄ, ՇՀԿ շրջանակներում»** ուսումնասիրության է ենթարկվել ույղուրական գործոնը ՉԺՀ արտաքին քաղաքականության բազմակողմ ձևաչափում: Կիրառելով փաստերի բովանդակային վերլուծության և պատմահամեմատական մեթոդները տվյալ ենթագլխում ույղուրական հարցը առանձնակիորեն դիտարկվել է ՄԱԿ, ԵՄ, ՇՀԿ շրջանակներում, ինչպես նաև ցույց տրվել այդ հարցում ՉԺՀ վճռական և հետևողական քաղաքականությունը: 21-րդ դարում բախվելով «ույղուրական հարցի» միջազգայնացման խնդրի հետ Չինաստանի արտաքին քաղաքականությունը ենթարկվեց փոխակերպման, իսկ ույղուրական գործոնը դարձավ միջազգային հարաբերությունների քաղաքական գործիքներից մեկը:

Ատենախոսության երրորդ գլխի երրորդ ենթագլուխը, որը կրում է **««Ույղուրական հարցը» Հայաստանի և Թուրքիայի՝ Չինաստանի հետ հարաբերությունների համատեքստում»** վերնագիրը, նվիրված է «ույղուրական հարցում» Թուրքիայի ներգրավվածությանը, սինո-թուրքական հարաբերություններում տեղի ունեցող շարունակական փոփոխություններին և Չինաստանի կողմից թուրքական ազդեցությունը զսպող քաղաքականության վարմանը: Պայմանավորված հայ-թուրքական խնդրահարույց հարաբերություններով և աշխատանքի ավարտուն տեսք ստանալու հանգամանքով, տվյալ ենթագլխում անդրադարձ է կատարվում նաև հայ-չինական հարաբերությունների զարգացման պոտենցիալին: Ուստի, ատենախոսության վերջին փուլում քննության առարկա է դառնում սինո-թուրքական հարաբերություններում առկա «ույղուրական բաղադրիչը» և դիտարկվում այն որպես հայ-չինական հարաբերությունների խորացմանը նպաստող հնարավոր գործիք:

**Եզրակացություններ** բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական դրույթները՝

1. Պատմության տարբեր փուլերում ույղուրները վճռորոշ դեր են խաղացել տարածաշրջանում տեղի ունեցող գործընթացներում և հանդիսացել «հնագույն Սինձյանի» անմիջական դերակատարներից մեկը: Չինական Ցին կայսրությունում Սինձյան մարզի ի հայտ գալուց ի վեր, ույղուրները բարիդրացիական հարաբերությունների մեջ էին գտնվում հաների և արքայատոհմի ներկայացուցիչների հետ, սակայն 20-րդ դարի սկզբին Չինաստանում տեղի են ունենում շրջադարձային փոփոխություններ, որոնք էլ ուղղակիորեն իրենց հետքն են թողնում մարզի հետագա ճակատագրի վրա:
2. 1955 թվականի Սինձյան-Ույղուրական ինքնավար մարզի ստեղծումից հետո, ույղուրների մի մասը և իսլամ դավանող այլ ժողովուրդներ դժգոհ մնացին նոր հաստատված հասարակարգից, ինչն էլ բերեց Չինաստանի իշխանությունների դեմ բազմապիսի ծայրահեղ գործողությունների իրականացմանը: Դժգոհությունները պայմանավորված էին իշխանությունների կողմից վարվող

քաղաքականությունով, պետականությունից զրկվելու և չինացիների՝ «հաների» կողմից կառավարվելու իրողությամբ: Այս հանգամանքները սրեցին չին-ույղուրական միջէթնիկ հարաբերությունները, իսկ «ույղուրական հարցը» Պեկինի համար դարձավ ռազմավարական նշանակության խնդիր:

3. 20-րդ դարի վերջին Չինաստանի ներքին քաղաքականության և տնտեսական բնականոն զարգացման արդյունքում, երկրի արտաքին քաղաքականությունը ենթարկվում է փոխակերպման: Եթե հռչակումից մինչև 20-րդ դարի վերջն ընկած ժամանակահատվածում ՉԺՀ կառավարության հիմնական նպատակը տնտեսապես կայանալը և ներքին համակարգը, սոցիալ-տնտեսական իրավիճակը, անվտանգության հարցերը կարգավորելն էր, ապա 21-րդ դարի երկրորդ տասնամյակից՝ Չինաստանը սկսում է դուրս գալ «քնած վիշապի» կարգավիճակից և «բացվել» աշխարհին: «Բացվել» հասկացությունն ունի միակողմանի՝ աշխարհին տնտեսական առումով հասանելի դառնալու իմաստ: Այդ է պատճառը, որ Չինաստանը չհանրայնացնելով ներքին անվտանգության հարցերը, օգտագործում է իր ողջ տնտեսական, քաղաքական, հանրային դիվանագիտության ուժը՝ արտաքին աշխարհում նոր շուկաներ գրավելու և քաղաքական լծակներ ձեռք բերելու համար:

4. 20-րդ դարի վերջին Կենտրոնական Ասիայում տեղի ունեցող փոփոխությունները, ԽՍՀՄ փլուզումը և Չինաստանի «բաց դռների» քաղաքականությունն էական ազդեցություն թողեցին Սինձյան-Ույղուրական ինքնավար մարզի վրա: Բացի այն, որ տվյալ գործընթացները մեծացրեցին ույղուրների կողմից նոր ծայրահեղ քայլերի ձեռնարկման ռիսկերը, աճեց նաև անջատողական, ահաբեկչական, հակաչինական գործունեության վտանգը: ՉԺՀ իշխանությունների համար անսպասելի էր ոչ միայն ԽՍՀՄ փլուզումը, կոմունիզմի դիրքերի թուլացումն աշխարհում, այլև «ույղուրական հարցում» նոր զարգացումների ընթացքը: Կենտրոնական Ասիայում աշխարհաքաղաքական նոր ակտորների ի հայտ գալը՝ ի դեմս նորաստեղծ հետխորհրդային պետությունների, ույղուրների համար հարմար առիթ ստեղծեց՝ փորձել վերականգնել ույղուրական անկախ պետականությունը: Վերոնշյալը հանգեցրեց նրան, որ ՍՈՒԻՄ-ում և Կենտրոնական Ասիայի երկրներում ույղուրների կողմից ստեղծվեցին մի շարք անջատողական և կրոնական ծայրահեղականությունը քարոզող կազմակերպություններ, ինչն էլ իր հերթին պարտադրեց Չինաստանին ցուցաբերել զսպվածություն և ամրապնդել իր դիրքերը ՍՈՒԻՄ-ի սահմանային գոտիներում:

5. ՍՈՒԻՄ-ում անջատողականության նախադրյալների տեսանկյունից աչքի էր ընկնում Պեկինի՝ զարգացման և բնակեցման քաղաքականությունը, որն էական ազդեցություն է թողել հետագա հան-ույղուրական միջէթնիկ հարաբերությունների վրա: Վերոնշյալ գաղափարը ենթադրում էր բնակչության թվի հան և ույղուր ժողովուրդների համամասնության փոփոխություն, այսինքն՝ Սինձյանի «հանաֆիկացում»: «Հանաֆիկացման» տենդենցները ՉԺՀ պատմության ընթացքում նկատվում են դեռևս 1954 թվականից, երբ Մաո Ձեդունի հրամանով ստեղծվում է «Բինգթուանը» կամ «Սինձյանի արտադրության և կառուցման կորպուսը»: Չինական կառավարությունը

փորձում էր համագործակցության ուղիներ գտնել նույնիսկ հոգևոր կյանքի ոլորտում, ինչը հնարավորություն կտար կոորդինացնել, հսկել և ղեկավարել կրոնական ինստիտուտները ոչ միայն Սինձյան-Ույղուրական ինքնավար մարզի, այլև՝ Չինաստանի ողջ տարածքում: 20-րդ դարի վերջին չինական իշխանությունները գնացին ՍՈՒԻՄ-ը բարեփոխելու և կրոնական բոլոր ինստիտուտների «պետականացման» ուղով: Այդ քաղաքականության շրջանակներում 1990 թվականի սեպտեմբերից Սինձյանի կառավարությունը մի շարք նոր որոշումներ ընդունեց, համաձայն որոնց՝ Սինձյանին հատկացված բոլոր օտարերկրյա աջակցությունները պետք է հաստատվեին, այնուհետև թույլատրվեին տեղի իշխանությունների կողմից: Այդ կարգավորումների հիմնական նպատակը՝ իսլամի ծայրահեղական գաղափարների տարածումը կանխելը, պետական մակարդակով կրոնական գործունեության վերահսկումը և մարզում կայունության պահպանումն էր:

6. Եթե չինական իշխանությունների կողմից նպատակ դրվեր թուլացնել կամ վերացնել երկրում իսլամի, իսլամական օրենքների և սովորույթների ազդեցությունը, ապա դա կտարածվեր ոչ միայն ույղուրների, այլև իսլամ դավանող այլ ժողովրդների վրա՝ ներառյալ հաների: ՉԺՀ-ը Սինձյանում վարում է կանխարգելիչ քաղաքականություն՝ չեզոքացնելով այն ուժերին, որոնք փորձում են օգտագործել ազգերի միջև կրոնական տարբերություններն ու բարենպաստ տարածաշրջանային փոփոխություններն անջատողական, ծայրահեղական գաղափարներ տարածելու նպատակով: 1990-ական թվականների ՍՈՒԻՄ-ում տիրող ներքին իրավիճակի և ահաբեկչական գործոնի հետևանքներին բախվելով, 21-րդ դարի սկզբին, Պեկինյան իշխանությունը միջազգային հարաբերություններում շրջանառության մեջ դրեց նոր տերմինի օգտագործումը՝ «Երեք ուժեր» կամ «Երեք չարիքներ» անվանումով, որի տակ թիրախավորվում էին՝ ահաբեկչությունը, էթնիկ անջատողականությունն ու կրոնական ծայրահեղականությունը:

7. Ույղուրական գործոնի ազդեցության աճն ուղիղ համեմատական է Պեկինի կողմից մշակվող խիստ սահմանափակումների խորացմանն ու ՍՈՒԻՄ-ում վերահսկողության միջոցառումների կիրառմանը: Դրանով է նաև պայմանավորված Չինաստանի կողմից մշակվող ներքին և արտաքին քաղաքական օրակարգը, որի վրա ուղղակիորեն ազդել են ույղուրական անջատողական, ծայրահեղական տրամադրություններն ու գործունեությունը՝ զուգորդված ահաբեկչության տարրերով:

8. 21-րդ դարում հակաահաբեկչական քաղաքականությունն իր բազմոլորտ բաղադրիչներով դարձել է ՉԺՀ ներքին, արտաքին քաղաքականության և ազգային անվտանգության դոկտրինայի անբաժան մասը: Ձեռք բերելով ներքին հակաահաբեկչական «իմունիտետ», ամրապնդելով իր դիրքերը ՍՈՒԻՄ-ում և կուտակելով «երեք չարիքների» գործոնի դեմ պայքարի բավարար փորձ, Չինաստանը՝ 21-րդ դարում ընդունեց «ույղուրական հարցի» անձնցյալ մարտահրավերներից մեկը: Այն էր՝ «ույղուրական հարցի» միջազգայնացման ռիսկը և որպես դրանից բխող հետևանք՝ տարածաշրջանային միասնական անվտանգային համակարգի ստեղծումը:

9. 20-րդ դարի վերջից Սինձյանում տեղի ունեցող զարգացումները և անկայունության հնարավոր դրսևորումները՝ Պեկինի կողմից դիտարկվում են որպես ՉԺՀ ներքին և արտաքին քաղաքականության մարտահրավերներ: Քանի որ ՍՈՒԻՄ-ում փոխակերպական գործընթացներն ավելի շատ տարածաշրջանային բնույթ են կրում, այլ ոչ միայն ներքին, Չինաստանին հարկավոր էր միասնական պայքարի ճակատ ստեղծել ընդդեմ «երեք չարիքների» գործոնի: 2001 թվականի ահաբեկչական դեպքերը նպաստեցին ՉԺՀ արտաքին քաղաքականության օրակարգում «ույղուրական հարցի» ներառմանը, ինչն էլ զուգորդվեց Կենտրոնական Ասիայում և առհասարակ տարածաշրջանում, Չինաստանի տնտեսական և քաղաքական դիրքերի ամրապնդմամբ:
10. Շանհայի համագործակցության կազմակերպությունը 20-րդ դարի 90-ական թվականների ՉԺՀ ներքին իրավիճակի կայունացման փորձի վերջնական արդյունքներից է, որը բացի նրանից, որ հնարավորություն ստեղծեց տարածաշրջանային համապարփակ վերահսկողություն սահմանել ույղուր անջատողականների, ծայրահեղականների և ահաբեկչական միավորումների նկատմամբ, նաև՝ պատմական նոր դիվանագիտական հաջողություն գրանցեց ՉԺՀ հռչակումից ի վեր:
11. Ույղուրական գործոնն անկասկած լրջագույն նշանակություն ունի Չինաստանի արտաքին քաղաքականությունում և մեծ ուշադրության է արժանանում միջազգային հանրության կողմից: Չինաստանը գիտակցելով դրա կարևորությունը, փորձում է անվտանգության ոլորտում պայմանավորվածություններ ձեռք բերելով և հնարավոր «թշնամու» հետ խորը բարիդրացիական հարաբերություններ հաստատելով՝ չեզոքացնել ածանցյալ ռիսկերն ու վտանգները: Տնտեսական բաղադրիչի օգնությամբ ՍՈՒԻՄ-ում հաջողության հասած չինական մոդելն առաջնային դիրք է գրավում նաև սինո-թուրքական հարաբերություններում: Ներկայիս իրավիճակում ույղուրական գործոնը պարբերաբար կարող է վտանգել թուրք-չինական երկկողմանի հարաբերությունները, սակայն 21-րդ դարում պետությունների միջև շուկայական հարաբերությունների գերադասելիության գործոնով պայմանավորված՝ խզումները կկրեն ժամանակավոր բնույթ:
12. Թուրքիան՝ հանդիսանալով «ույղուրական հարցի» հետ անմիջական կապ ունեցող սուբյեկտ, ներգրավեց չինական կապիտալը սեփական տնտեսությունը զարգացնելու և Պեկինի հետ փոխշահավետ համագործակցություն սկսելու համար: ՀՀ հարևան Թուրքիայի դեպքում ույղուրական գործոնը երկակի և փոխշահավետ դեր խաղաց սինո-թուրքական հարաբերություններում, քանի որ ինչպես Պեկինին է անհրաժեշտ «ույղուրական հարցում» Անկարայի դիրքորոշման թուլացումն ու չեզոքացումը, այնպես էլ Թուրքիան է հետաքրքրված Չինաստանի ներդրումային ծրագրեր իրականացնելու պոտենցիալով: «Ույղուրական հարցը» հնարավոր է սառեցված կարգավիճակում պահել տնտեսական կապերի խորացման հաշվին, սակայն Չինաստանի արտաքին տարածաշրջանային քաղաքականության

վերլուծությունից՝ պարզ է դառնում, որ ՉԺՀ-ն հետաքրքրված է Թուրքիային հակազդելու այլ հաջողված փորձերի ուսումնասիրությամբ:

13. Հայաստանը՝ պատմականորեն գտնվելով պանթուրքիզմի գաղափարախոսության հակառակ ճակատում, կարող է տարածաշրջանում դառնալ Չինաստանի ռազմավարական գործընկերը: Այդ պարագայում Չինաստանը հետաքրքրված կլինի ունենալ թուրքական ազդեցությունը կանխող, բալանսավորող տարածաշրջանային կենտրոն, որի հետ փոխշահավետ համագործակցությունը թույլ կտա երկու պետություններին մանևրել միջազգային հարաբերությունների համակարգում: Տարածաշրջանում թուրքական դիրքերի թուլացումից բացի, Պեկինը հնարավորություն կունենա «ույղուրական հարցում» ազդել Թուրքիայի պաշտոնական դիրքորոշման վրա և ուժեղացնել իր անվտանգային համակարգերը: Այդ իսկ պատճառով, Երևանը պետք է հեռանկարային մոտեցում ցուցաբերի՝ հենվելով չին ժողովրդի հետ ընդհանուր շահերի և թուրքական ազգային ինքնատիպի հետ հակասող գաղափարախոսություն ունենալու հանգամանքի վրա:
14. Հայաստանի համար Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը տնտեսական կարևոր գործընկեր է, սակայն մեծ մասամբ հանքանյութեր արտահանելու իրողությունը փաստում է այն մասին, որ Չինաստանն ամբողջովին ուսումնասիրված չէ Հայաստանի կողմից, չեն օգտագործվում չինական շուկայի առավելությունները, իսկ ույղուրական գործոնը դեռևս չի հասցրել դառնալ հայ-չինական տնտեսական հարաբերությունների զարգացման խթան:
15. Հայաստանը գնահատելով իր հնարավորություններն ու կարևորելով զարգացման հեռանկարային տեսլականը՝ կարող է մաքսիմալ օգուտներ քաղել ՄԳՄՃ նախաձեռնությունից և Չինաստանի հետ համագործակցությունից: Ույղուրական գործոնը չի կարող շահարկվել Հայաստանի Հանրապետության կողմից՝ ելնելով վերջինիս ույղուրների և թյուրքական ծագում ունեցող երկու հարևանների հետ ունեցած արժեհամակարգային տարբերություններից, այնուամենայնիվ, ույղուրական գործոնն աշխարհաքաղաքական իմաստով, կարող է կատալիզատոր հանդիսանալ և դառնալ փոխշահավետ օգտագործման գործիք՝ հայ-չինական հարաբերությունների զարգացման համատեքստում:
16. «Ույղուրական հարցի» առկայությունը հայ-չինական հարաբերությունների օրակարգում կարող է միմիայն նպաստել չինական պրոհայկական ծրագրերի իրականացմանը, ռազմական ոլորտում զորավարժանքների անցկացմանը, ՀՀ զարգացման համար չինացի գիտնականների արդյունավետ փորձի ներգրավվմանը և ենթամշակութային միջոցառումների անցկացմանը: Հայաստանը կարող է տեղեկատվական տեխնոլոգիաների և ժամանակակից թվային տեխնիկայի արտադրության ոլորտների չինական առաջատար ընկերություններին առաջարկել դառնալ կապող օղակ՝ Ասիայի և Եվրոպայի միջև:
17. Ույղուրական գործոնը գտնվում է հայ-չինական հարաբերությունների և հնարավոր համագործակցությանը դրդող մեխանիզմների դեռևս

«ենթագիտակցական» փուլում և հայկական կողմի ճշգրիտ ուսումնասիրության ու ոյղուրական «գործիքի» դիվանագիտական խողովակի միջոցով կիրառման արդյունքում՝ կարող են շահել հայ-չինական հարաբերությունները: Չինաստանի արտաքին քաղաքականության և տարածաշրջանի հեռանկարային զարգացման տեսլականում ՀՀ-ն զբաղեցնում է իր ուրույն տեղը և պատմական, գաղափարական նմանություններից ելնելով՝ հայկական կողմին անհրաժեշտ է վերլուծել 20-րդ դարի վերջից ՉԺՀ տնտեսության փոխակերպական գործընթացները, անվտանգային հիմնախնդիրները, դրանցով պայմանավորված արտաքին քաղաքականության առաջնահերթությունների փոփոխություններն ու փորձել հաստատվել միջազգային հարաբերությունների նոր ձևավորվող հասարակարգում:

**Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքները**

1. **Խաչատրյան Ա.,** Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզում անջատողական տրամադրությունների աճը 20-րդ դարի վերջին և Պեկինի համաչափ արձագանքը, «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, Թիվ 4(9), Երևան, 2020, էջ 37-46:

2. **Խաչատրյան Ա.,** Ահաբեկչական դրսևորումները Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզում (20-րդ դարի վերջ - 21-րդ դարի սկիզբ), «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, №3, Երևան, 2020, էջ 100-105:

3. **Խաչատրյան Ա.,** «Երեք չարիքների» գործոնը ՉԺՀ կառավարման և անվտանգության մարտահրավերների համատեքստում, «Այլընտրանք» գիտական հանդես, Ապրիլ-Հունիս, Երևան, 2020, էջ 14-24:

4. **Խաչատրյան Ա.,** Կենտրոնական Ասիայի դերն ու նշանակությունը ՉԺՀ տարածաշրջանային քաղաքականությունում (XX-րդ դարի վերջ), «Պատմություն և քաղաքականություն» գիտական հանդես, Թիվ 3(8), Երևան, 2020, էջ 43-55:

5. **Խաչատրյան Ա.,** «Ույղուրական հարցը»՝ ՉԺՀ արտաքին հարաբերությունների կառավարման մարտահրավերների համատեքստում, «Այլընտրանք» գիտական հանդես, Հուլիս-Սեպտեմբեր, Երևան, 2020, էջ 38-54:

6. **Խաչատրյան Ա.,** Չին-թուրքական հարաբերությունների տրանսֆորմացիոն շրջանն ու «ույղուրական հարցի» չեզոքացումը (20-րդ դարի վերջ- 21-րդ դարի սկիզբ), «Տարածաշրջան և աշխարհ» գիտավերլուծական հանդես, №4, Երևան, 2020, էջ 32-38:

**ХАЧАТРЯН АЛЕКСАНДР ГЕГАМОВИЧ**
**УЙГУРСКИЙ ФАКТОР В СФЕРЕ ВНЕШНЕЙ ПОЛИТИКИ КИТАЯ (СЕРЕДИНА 20-ВЕКА – 2010-ЫЕ ГОДА)**

**Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 - "Всемирная история". Защита состоится 3 июня 2021 г., в 14:00, на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна 24/4.**

## РЕЗЮМЕ

**Актуальность темы.** Актуальность темы диссертации обусловлена укреплением позиций в системе международных отношений и мощным экономическим развитием Китайской Народной Республики в 21 веке, а также усилением сепаратизма, религиозного экстремизма и терроризма на северо-западе страны с конца 20 века. Вышеупомянутые обстоятельства являются основой манипуляций «уйгурским вопросом» со стороны ряда государств для оказания международного давления на Китай, с целью предотвращения перспектив экономической и политической экспансии КНР.

В результате роста уйгурских сепаратистских настроений в конце 20 века, пантюркистская идеология и религиозный экстремизм, нашедшие широкое распространение в Центральной Азии, стали факторами прямого влияния на внутреннюю и внешнюю политику Китая. Исходя из стратегической значимости отношений между РА и КНР, важно прежде всего изучить влияние уйгурского фактора на внешнюю политику Китая и, сделав надлежащие выводы, в дальнейшем продолжать развитие двусторонних отношений с учетом этого фактора. Актуальность темы обусловлена также прямой вовлеченностью Турции в «уйгурский вопрос», а в аспекте манипулирования этой проблемой на международной арене - интересом США и других западных стран.

На современном этапе невозможно также игнорировать сдерживающую, превентивную политику, проводимую Китаем в Синьцзян-Уйгурском автономном районе, которая вызывает резкий отклик международного сообщества. Именно поэтому необходимо прежде всего изучить сущность «уйгурского вопроса» и его исторические предпосылки, а также изменения, происходящие в Синьцзяне с конца XX века и их влияние на внешнюю политику Китая.

**Объект и предмет исследования.** Объект исследования - уйгурская составляющая внешней политики Китая. Предметом исследования являются внутренняя и внешняя политика Китайской Народной Республики, исторические этапы ее становления, региональные изменения и их влияние на события в Синьцзяне. Целью данной работы является изучение уйгурской составляющей внешней политики Китая и выявление ее прямого влияния на трансформационные процессы внешних сношений КНР.

**Научная новизна исследования**. Представленная работа уникальна в своем роде, поскольку ее тема практически не исследована в армянской историографии. Более того, впервые предпринята попытка рассмотреть «уйгурский вопрос» во внешнеполитической сфере Китая, что способствует развитию китаеведения в Армении и всестороннему изучению уйгурской проблемы.

Исследование представляет научному сообществу не только анализ трансформационных этапов внутренней и внешней политики Китая, предпосылки и причинно-следственные связи уйгурского сепаратизма, историю интернационализации «уйгурского вопроса», но также рассматривает, с точки зрения «уйгурского вопроса»,

возможность использования исторического конфликта между Арменией и Турцией в качестве инструмента развития отношений РА с КНР.

Диссертация состоит из введения, трех глав, заключения и списка использованной литературы.

**В введении** обоснована актуальность выбранной темы, представлены цели и задачи исследования, методологическая основа, научная новизна, теоретико-практическое значение работы, а также краткий обзор использованной литературы и иных источников.

**Первая глава** исследования: **“Происхождение и исторический путь уйгуров, формирование Синьцзян-Уйгурского автономного района”**. Она состоит из двух подглав. Первая подглава – “Происхождение и распространение уйгурского этноса (с древних времен до конца XIX века)”», рассматривает процесс формирования уйгурского этноса, роль уйгуров в регионе Синьцзян и основанные ими собственные государственные образования с древних времен до конца 19 века. Поскольку в основе уйгурского сепаратизма лежит идея создания независимого государства, во второй подглаве первой главы настоящего исследования под названием “Уйгурские государственные образования в XX веке и присоединение Синьцзяна к Китаю” представлены внутренние изменения в Китае с начала 20 века и их прямое влияние на Синьцзян. Особое внимание уделено прецеденту образования двух независимых уйгурских государственных образований в XX веке, рассмотрено их геополитическое значение, а в завершении представлена история образования Синьцзян-Уйгурского автономного района в 1955 году.

**Вторая глава** диссертации называется “Происхождение “уйгурского вопроса” и его влияние на региональную политику Китая”. Она состоит из четырех подглав. В первой подглаве “Трансформации внутренней и внешней политики Китая” сделана попытка показать картину изменений внутренней и внешней политики Китая во второй половине 20-го века, существующие проблемы и методы их разрешения. Вторая подглава – “Предпосылки роста сепаратистских настроений в СУАР, их внутренние и внешние причины” представляет условия и причины распространения сепаратистских идей и роста экстремистских проявлений в Синьцзян-Уйгурском автономном районе (СУАР). В подглаве также дана картина региональных изменений конца XX века, в частности, распада СССР и появления новых акторов, что способствовало обострению внутренней ситуации в СУАР и переходу «уйгурского вопроса» в активную фазу. В третьей подглаве: “Терроризм как следствие проявления сепаратизма и религиозного экстремизма – вызов безопасности Китайской Народной Республики”, излагаются предпосылки и цели уйгурских террористических проявлений, а также дается анализ инструментария, используемого властями Китая для осуществления ответных мер. В четвертой подглаве, озаглавленной как “Уйгурские террористические организации (конец XX - начало XXI века)”, дается детальный анализ исторических этапов создания наиболее активных уйгурских террористических организаций, исследуются их принципиальные отличия и непосредственная деятельность.

Последняя, **третья глава** диссертации: “Уйгурский фактор в многостороннем формате внешней политики Китая” состоит из трех подглав. В первой подглаве “Институционализация контртеррористической политики Китая в начале 21 века с точки зрения интернационализации уйгурского вопроса”, посвящена борьбе против «Трех зол»: здесь рассматривается весь инструментарий, с помощью которого Пекин стремится предотвратить возникновение новых сепаратистских организаций, исповедующих религиозный экстремизм и терроризм, как в Синьцзяне, так и по региону в целом. Вторая подглава – “Интернационализация «уйгурского вопроса» в рамках ООН, ЕС, ШОС”, посвящена изучению уйгурского фактора в контексте многосторонней внешней политики

Китая. Здесь рассматриваются особенности «уйгурского вопроса» в рамках ООН, ЕС и ШОС, а также решительная и последовательная политика Китайской Народной Республики в этом вопросе. Третья подглава: “«Уйгурский вопрос» в контексте отношений Армении и Турции с Китаем”, рассматривает степень вовлеченности Турции в «уйгурский вопрос», особенности китайско-турецких отношений и сдерживающую политику Китая в отношении Турции. В данной подглаве также исследуется потенциал углубления армяно-китайского сотрудничества в свете конфликтных отношений Армении с Турцией. В этой связи предметом изучения завершающей части диссертации является «уйгурская составляющая» китайско-турецких отношений, которая рассматривается как возможный инструмент углубления и расширения армяно-китайских отношений.

В **заключении** представлены основные результаты исследования.

**KHACHATRYAN ALEKSANDR**

**UYGUR FACTOR IN THE AREA OF CHINA'S FOREIGN POLICY (MID-20-CENTURY – 2010s)**

**The dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of “World History” 07.00.02. The defense of the dissertation will take place on 3 June 2021, at 14:00, at the meeting of the Specialized Council 006 “World History” at the Institute of Oriental Studies of NAS RA. Address: Yerevan, 0019, Marshal Baghramyan Ave., 24/4.**

## SUMMARY

**Relevance of the topic.** The relevance of the topic of the thesis is determined by strengthening of People's Republic of China’s positions in the system of international relations in the 21st century, its growing powerful economy, as well as the strengthening of separatism, religious extremism and terrorism in the northwest of the country since the end of the 20th century. The above-mentioned circumstances can be considered as an instrument for the manipulation of the “Uygur issue” by a number of states in order to exert international pressure on China, to prevent the prospects for economic and political expansion of the PRC.

As a result of the growth of Uygur separatist sentiments at the end of the 20th century, pan-Turkic ideology and religious extremism, which were widespread in Central Asia, became factors of direct influence on China's internal and foreign policy. Based on the strategic importance of relations between the RA and the PRC, it is important, first of all, to study the influence of the Uygur factor on China's foreign policy, come to appropriate conclusions and keep developing bilateral relations, taking this factor into account. The relevance of the topic is also due to Turkey's direct involvement in the “Uygur issue”, and in the aspect of manipulating this problem in the international arena - by the interest of the US and other western countries.

At the present stage, it is also impossible to ignore China's deterrent, preventive policy in the Xinjiang Uygur Autonomous Region, which is receiving a sharp reaction from the international community. That is why it is necessary, first of all, to study the essence of the “Uygur issue” and its historical background, as well as the changes taking place in Xinjiang since the end of the twentieth century and their influence on China's foreign policy.

**Object and subject of research.** The object of research is the Uygur components of China's foreign policy. The subject of the research is the internal and foreign policy of the People's Republic of China, the historical stages of its formation, regional changes and their impact on events in Xinjiang. The aim of the thesis is to study the Uygur components of China's

foreign policy and identify their direct impact on the transformational processes in the sphere of international relations of the People's Republic of China.

**Scientific novelty of the research.** The presented thesis is unique in its kind, since its topic has practically not been studied in Armenian historiography. Moreover, for the first time, an attempt has been made to consider the "Uygur issue" in the area of China's foreign policy, which contributes to the development of Sinology in Armenia and a comprehensive study of the "Uygur issue". The study presents to the scientific community not only an analysis of the transformational stages of China's internal and foreign policy, the preconditions and cause-and-effect relationships of Uygur separatism, the history of the internationalization of the "Uygur issue", but also considers, from the point of view of the "Uygur issue", the possibility of using the historical conflict between Armenia and Turkey as a tool for the development of RA relations with China.

The dissertation consists of an introduction, three chapters, conclusion and a reference list.

**The introduction** includes the relevance of the chosen topic, presents the goals and objectives of the study, methodological basis, scientific novelty, theoretical and practical value of the research, as well as brief overview of the bibliography.

**The first chapter**, "The origin and historical path of the Uygurs, the formation of the Xinjiang Uygur Autonomous Region" consists of two sub-chapters. The first sub-chapter, "The Origin and spread of the Uygur ethnos (from ancient times to the end of the 19th century)", examines the process of formation of the Uygur ethnos, the role in the Xinjiang region and their own state formations founded during the period of ancient times to the end of the 19th century. Since Uygur separatism is based on the idea of establishing an independent state, the second sub-chapter of the first chapter, entitled "Uygur state formations in the 20th century and Xinjiang's accession to China", presents the internal changes in China since the early 20th century and their direct impact on Xinjiang. Particular attention is paid to the precedent of the formation of two independent Uygur state formations in the 20th century, their geopolitical significance and the history of the formation of the Xinjiang Uygur Autonomous Region in 1955.

**The second chapter** of the dissertation is entitled "The origin of the"Uygur issue" and its impact on China's regional policy". It consists of four sub-chapters. In the first sub-chapter "Transformations of China's internal and foreign policy", an attempt is made to show the changes in China's internal and foreign policy in the second half of the 20th century, the existing problems and methods of their solution. The second sub-chapter - "Prerequisites for the growth of separatist sentiments in the XUAR, their internal and external reasons" presents the conditions and reasons for the spread of separatist ideas and the growth of extremist manifestations in the Xinjiang Uygur Autonomous Region (XUAR). It studies the regional changes at the end of the twentieth century, in particular, the collapse of the USSR and the emergence of new actors, which contributed to the aggravation of the internal situation in the XUAR and the transition of the "Uygur issue" into an active phase. The third sub-chapter, "Terrorism as a consequence of the separatism and religious extremism - a challenge to the security of the People's Republic of China," outlines the prerequisites and goals of Uygur terrorist manifestations, as well as analyzes the tools used by the Chinese authorities to implement retaliatory measures. The fourth sub-chapter, entitled "Uygur terrorist organizations (late XX - early XXI century)", provides a detailed analysis of the historical stages of the creation of the most active Uygur terrorist organizations, examines their fundamental differences and direct activities.

The last, **third chapter** of the dissertation, "The Uygur factor in the multilateral format of China's foreign policy", consists of three sub-chapters. The first sub-chapter, "Institutionalizing China's counter-terrorism policy in the early 21st century from the

perspective of the internationalization of the “Uygur issue” is devoted to the fight against the “Three Evils”: it examines the entire toolkit with which Beijing tries to prevent the emergence of new separatist organizations professing religious extremism and terrorism both in Xinjiang and the region itself. The second sub-chapter - “Internationalization of the “Uygur issue” within the framework of the UN, EU, SCO”, is devoted to the study of the Uygur factor in the area of China's foreign policy. It examines the features of the “Uygur issue” within the UN, EU and SCO, as well as the decisive and consistent policy of the People's Republic of China on this issue. The third sub-chapter, “The Uygur issue in the context of Armenia and Turkey relations with China”, examines the extent of Turkey's involvement in the “Uygur issue”, the specifics of Sino-Turkish relations and China's deterrent policy towards Turkey. This sub-chapter also explores the potential for enhancing Armenian-Chinese cooperation based on the conflict relations between Armenia and Turkey. In this regard, the subject of the final part of the research is the “Uygur component” of the Sino-Turkish relations, which is considered as a possible tool for deepening and expanding the Armenian-Chinese relations. This sub-chapter also explores the potential for developing Armenian-Chinese cooperation in the light of Armenia's conflict relations with Turkey. In this regard, the subject of the final part of the dissertation is the “Uygur component” of the Sino-Turkish relations, which is considered as a possible tool for enhanching and developing the Armenian-Chinese relations.

The **conclusion** includes the main outcomes of the research.